

32

204

8
4-73

204

ԱՍԻԱՑԻ ՍԱՓՐԻՉԵ



Եղիս 1821.

ԳԻՆ 10 ՂՐՈՒՇ

2013

8
4-73

13

Ա. ԱՐԱՐՈՒԱԾ

Սափրիչի կահաւորուած խանուք մը: Սափրիչը
արռոի մը վրայ նստած, մտածիոն իր բիբան կը բառէ.
յանախորդ մը ներս կը մտնէ: Սափրիչը ոսքի ելլելով՝

ԱԱՓՐԻԶ — Հրամեցէ՛ք բարեկամ։
Ա. ՅԱԶԱԽՈՐԴ — Բարեւ Այբակում զիս կ'ածի-
լե՞ս։

ԱԼՓՐ. — Բարեւ Մելքոն, ինչու չածիլեմ:

Ա. ՅԱՃ. — Ես ՄԵՐՈՒ ՀԵԺ:

ԱԱՓՐ. — Հապա քեզ ո՞վ ըստ որ ես Այրա-
կոմ եմ:

Ա. — ՅՇՃ. Եղբայր, դէմքդ անանկ ցոյց Կուտայ
որ գուն առառաւելն Ամբակում մը կամ Առաքել մը
կրնաս ըլլալ, քանի որ արհեստդ և դէմքդ Ամբակու-
մէ մը կամ Առաքելէ մը աւելի արժել չեն տար զքեզէ

ՍԱՓԲ. — Ես ալ չեմ սխալած ուրեմն որ, քու գէմքդ Մելքոն անունէն զաա ուրիշ քաղցրահնչիւն անունի մը արժանի չկրնար ըլլալ, քանի որ անուններ կան որ Պարոնեանին ըսածին պէս, արհեստը գուշակել կուտան. զոր օրինակ, «Կիրակոս եկած է» ըսածնուն պէս, կը պատրաստուիմ ընդունելու զգումի չափ քթով, նոյ նահապետին ոտքին չափ երկայն կզակով, ցախաւելի նման իրար անցած պեխսերով, աղտոտ ու պատռած ժաքեթով, տակառի մեծութեամբ զլուխով և հորի չափ խորունկ բերնով հսկայ հայ մը որ քովդ մօտենալուն, կը կարծես թէ Արարատի լեռ վրադ պիտի փլի:

Ա. ՅԱԾ. — Հանել է զիս ալ այդպէս կ'ընդունիս:

ՍԱՓԲ. — Քաւ լիցի, այդպէս ըսել չեմ ուզեր,
բայց դռւն ատանկ կը մեկնես. ի՞նչ կրնայի ըսել երբ



— 2 —

անունդ չէի գիտեր, հարկաւ հայու մը անուն պիտի
տայի, ինչպէս նոյնը ըրիր դուն, թէեւ անունս Ամ-
բակում չէ: Եւ պէտք է գիտնաս որ, մեր մէջ Ամբա-
կում անունը հաւասար է թուրքերէն պուտալա բա-
ռին, որովհետև ամէն զուարծալիք ու զաւեշտ Ամ-
բակում անունին շուրջ հիւսուած է. զոր օրինակ,
անցեալ օր սրճարանը մարդուն մէկը լրագրին մէջ
կը կարդայ որ Արեւը 12 միլիոն (տասներկու միլիոն)՝
տարիէն պիտի մարի. Ամբակում անունով մէկը լսե-
լով կ'ըսէ, կամաց կարդա՛ մարդ Աստուծոյ, կրնայ
ըլլալ նպարավաճառ մը գտնուի հոս ու երթայ կազին
գինը ցարձրացնել: Ուրիշ օր մը Ամբակում բարեկա-
մի հետ ճամբայ քայած ատեն կը հանդիպի իշու մը
որ կը զուար ու կը զրզուար անվերջ. բարեկամը կ'ը-
սէ, խեղճ անասունը, գէշ տեսակէն հարբուխ եղեր է,
Ամբակում կ'ըսէ բարեկամին — իրաւ, աղէկ միտքս
ինկաւ, ինտո՞ր եղաւ ձեր հարբուխը...: Ամբակում
զործ չունենալուն պէտ գիւղ կը քաշուէր և հողէ ա-
մաններ զնելով շրջակայ ազարակները ծախելու կ'ել-
լէր: Օր մը, հունձքի ժամանակ, կէս օրուանց Թօտիկ
կը հասնի ազարակ մը որուն տիրուհին ցորեկուան
ճաշը պատրաստելու վրայ էր՝ դաշտը հնձելու զացող
իր ամուսինին և բանուորներուն համար: Խաթունը
— կծծիին մէկը — ոչ պատուկ մը զնել ու զեց. ոչ ալ
քչիկ մը ճաշ տալ հաճեցաւ մեր մարդուկին: Ամբա-
կում անոր շահամոլ բնութիւնը զիտնալով, իսկոյն
խորամանկութիւնը մը ճեւեց իր մտքին մէջ: Ազարա-
կին դէմը գտնուող հսկայ թմբին ցոյց տալով, ըստ
խաթունին թէ միտք ունէր թոչունի վանդակ մը
շինելու. ուստի կրնա՞ր անոր բարակ ճիւղերէն 20
հատի մը չափ կարել, որոնց համար պատրաստ էր
երկուքնոց մը վճարելու: Երկուքնոցին ձայնը լսե-
լուն պէս՝ խաթունը սօթարւորած էր արդէն, և սան-

— 3 —

գուխ մը դնելով թմբիին բունին՝ ծառն ի վեր շուլ-
լուեցաւ: Ամբակում չուշացաւ սանդուխը վերցնել
տեղէն, տուն տանիլ ձգել ու հոն փառաւոր ճաշ մը
ընել, յետոյ բերանը սրբելով՝ ուղղուեցաւ դէպի այն
դաշտերն ուր կ'աշխատէին խաթունին էրիկն ու մը-
շակները: Ազարակազանը Ամբակումը տեսնելով. —
Մեր դիէն կուգաս կոր, ի՞նչ կայ, ձայնեց, կինս
ծառն է ելեր և անդադար գոզնոցը կ'երեցնէ կոր:
— Բան մը չէ հինգ դրուշի հաշիւ մը, յարեց Ամբա-
կում պաղարիւնութեամբ: Բանի մը պատուկ գնեց
ինձմէ. յարմար գրամ չունէր վրան, ձեզի նշան կ'ը-
նէ որ վճարէք: Ու քառորդը գրպանելով անտառ կը
մտնէ: Վերջապէս օր մը Ամբակում ճաշարանի մը
կառսօն կ'ըլլայ. յաճախորդ մը ճաշարան մտնելով
կերակուրը կ'ուտէ և կշտանալէ վերջ կերակուրի մնա-
ցարդը ձգել մեղքնաւով հաւի կտոր մը կամացուկ մը
գրպանը կը խօթէ: Ամբակում նշամարելով, կը մօտե-
նայ անոր և ապուրին պնակն ալ կամաց մը միւս
գրպանը կը պարպէ. ի՞նչ ըրիր կառսօն, կը պօսայ
յաճախորդը վերջին ծայր բարկացած: Ոչի՞նչ. ձեզի
օգնել ու զեցի, ապուրը կը մոռնայիք կոր հետերնիդ
տանիլ, կը պատասխանէ Ամբակում:

Ահա այսպիսի միամտաբանութիւններ են որ կը
պատմուին Ամբակում անունին համար և ես չվիրա-
ւորուեցայ այդ անունը ինծի տալերնուդ, մինչեռ
գուք Մելքոն անունէն այնքան խրտչեցաք: (Յան-
կարծ կը մտնէ Բ. յաճախորդը):

Բ. ՅԱԾ. — Բարեւ Դամիանոս աղա, զիս կ'ա-
ծիկս:

ԱԱՓԲ. — Ահա սուրբ Մարկոս մըն ալ, որ Ամբա-
կումէն վերջ Դամիանոս անունով կը մկրտէ զիս,
գէշ չէ, ասանկ երթայ նէ մինչեւ իրիկուն հայկական
անունները լմնալէն վերջ Զինարենէն փոխ պիտի



18970-59

ՕՐՔ

— 4 —

պիտի առնեն։ Հիմա սանկ (բազուկները բանալով) մարդու հասակի մեծութեամբ գիրերով անունս պիտի գրեմ ու խանութիս ճակատը պիտի կախեմ, որպէս զի եկող յաճախորդը ո՞չ Ամբակում կոչէ զիս, ո՞չ Դամիանոս և ոչ ալ օր մը Դամիանոսը թշնամաբար չարափոխելով Դուռմիանոս կոչեն։

Բ. ՅԱՅ. — Կ'աղաչեմ Պ. Սափրիչ, հիմա քու խական անունէդ աւելի իմ ածիլուիլս անհրաժեշտ է, որովհետեւ հիւանդիս հրաւիրելիք բժիշկս մաքրութեան այնքան խստապանջ է եղեր որ, իրեն ներկայացող մարդուն ածիլուած ըլլալը միշտ կը պահանջէ եղեր. հետեւաբար շուտով զիս ածիրէ առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու։

ՍԱՓՐ. — Ո՞գ է հիւանդդ որ այնքան կ'ամպարես բարեկամս։

Բ. ՅԱՅ. — Մօրաքրոջս քրոջը տղուն եղբօրը աղջկան թոռանը թոռ։

(Ա. Յանախորդը բարկութեան նօսներ ցոյց կուտայ, ուու ուու ժամացոյցը կը նայի եւ երեմն ոտքի ելլելով կ'երբայ կուգայ եւ յետոյ կը նսի միօս զայրացկոս):

ՍԱՓՐ. — Հա՛, հա՛, հա՛. (կը խնդայ քրջալիր). մօրաքրոջս... քրոջը... տղուն... եղբօրը... աղջկանը... թոռանը... թոռը. (Գլուխը շարժելով կը զարմանայ): Այս անունները իրարու ետեւէ մինչեւ ըսես, Ամերիկայէն ճամբայ ելած շոգենաւը հոս հասած կ'ըլլայարդէն իսկ։ (Հեղեական) է՛, ի՞նչ է եղեր նայինք այդ թոռանը թոռին հիւանդութիւնը։

Բ. ՅԱՅ. — Զենք գիտեր, միայն ինք կ'ըսէ թէ իր հիւանդութիւնը ԱՆՕԹՈՒԹԻՒՆ կ'ըսուի եղեր և թէ զայն զարմանելու համար միակ գեղը՝ օրական 15 քիլո հաց, 10 քիլո տօմաթէս և ? քիլո բրասա է եղեր։ Անցեալ օր բժիշկը անգլիական ազի տեղ դաւա-

գանի 50 հարուած նշանակած է։

ՍԱՓՐ. — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ, եկո՛ւր նստէ, քանի որ անօթութիւն է եղեր հիւանդութիւնը, ուրիշ բանի չնմանիր, կրնայ մէկ վայրկեանէ միւսը մեռնիլ. ինչպէս որ Անբակում անունով մէկը անցեալ օր Սատանաներու կայսրութեան մայրաքաղաքին Անօթութիւն փողոցին մէջ նոյն հիւանդութենէն մեռած է։ Նստի՛ր ուրեմն, ածիլեմ, շուտ, շուտ։

(Բ. Յանախորդը կը նսի: Սափրիչը անոր երկու երեսը լաւ մը կ'օնառէ, յետոյ ՅՅ սանրիմեդր փայտէ սգեղ կորով եւ նոյն երկարութեամբ բիրեղէ տեղբով ածելիով մը մեկ երեսը մեյ մը կ'ածիլէ. մեյ մը — իբր թէ — կը կտրէ ու գրպանեն ծխատուփը հանելով մեզեն սիկառի մը բուլը կը հանի ու աջ ափին մէջ դնելով զայն, բարձրաձայն կը բենի լաւ մը խառնելի յետոյ եւ բաւական ուժգին կտրած տեղին կը փակցնէ։ Տանի մը անգամ կը կրկնէ կտրելու եւ բուլը փակցնելու գործողութիւնը եւ իբր թէ ածելին չկտրեր, ձեռքովը գլուխը անդին հրելով բարկացած)։

Եղբայր, մազդ խոզի մազէն աւելի կարծր է ածելին ալ չկտրեր։

Բ. ՅԱՅ. — Ծօ՛ կացին չբերե՛ս։ (Սափրիչը կացին մը կը բերէ անմիջապէս եւ կամաց կամաց մազերը կը կտրէ, մեյ մըն ալ յանկարծ խիս այլանդակ դէմքով ու տարազով սատանան ներս կը մտնի ու անդին ասդին արագ արագ կը վազլզէ զանազան շարժուձեւերով ու դէմքի ծամածութիւններով)։

ՍԱՓՐ. — (Կացինով սատանալին վրայ յարձակեն) հե՛տ, հե՛տ անպիտան։ Սատանան կը վախսի եւ սափրիչը ածելին ձեռք կ'առնէ. կը մտնէ Մարզար)։

ՄԱՐԴԱՐ. — Բարեւ ձեզ։

ՍԱՓՐԻՉ. — 0՛, բարեւ Մարզար, հրամեցէք,

ՄԱՐԴ. — Զպիտի կրնամ մնալ, միայն եթէ քիչ մը

բաղի թուղթ խաղանք, կը մնամ ժամանակ մը:
ՍԱՓՐ. — Շատ աղէկ (Ածելին նետելով անմիջապէս գետին կը նստին ծալապատիկ ու կը խաղան տաք տաք, մինչ անդին Բ. Սահախորդը ոտքի ելելով բարկացած)։

Բ. ՅԱՅ. — Եղբայր, զազ անցանք քու ածիլեւէդ, արդէն դուն սափրիչ չես, մասգործ ես. միայն մէկ երեսէս մէկ երկու պրզօլացու հանեցիր. միւսն ալ ամբողջութեամբ վրայ չտուած սըկէ երթանք. Մէկ երեսս ածիլուած, մէկը ածիլուելիք կը ներկայանամ բժիշկին, եթէ հարցնէ մէկ երեսիս չածիլուելուն պատճառը, կ'ըսեմ թէ՝ սափրիչը աճապարանքով մոռցեր է մէկ երեսս ածիլելու (Գրպանին կը հանէ ծ լրւ. նոց մը, կը նետէ սափրիչին վրայ, սափրիչը առնելով)։

ՍԱՓՐ. — Եղբայր իտար չըներ. 20 դրուշ է մէկ ածիլուիր,

Բ. ՅԱՅ. — (Բարկացած) Եղբայր ի՞նչ կ'ըսես, ես կէս ածիլուեցայ, իրաւունքդ 10 դրուշ կ'ընէ, 5 դրուշ ալ երեսս կտրելու համար զեղջեցի բժշկին տալիք դրամիս փոխարէն. ուրեմն, իրաւունքդ 5 դրուշ կ'ընէ. մնաք բարով, (կը մեկնի արհամարական երեւորվ. սափրիչը դիմքի եւ գլուխու անհող շարժումով մը դրամը կը գրպանէ ու գործը կը շարունակէ եւ ցած ձայնով «Ես պիտի շահիմ, դուն չպիտի շահիս» ըսելով կը վիճաբանին. մինչ բանդին Ա. Սահախորդը Մարգարի ետեւն աշխերը լարելով, որունեները եւ ակռաները սեղմելով բռունձքը կը ցուցնէ, ժամացոյցը ուր ուր կը նայի, գլուխը աջ ու ձախ պառկեցնելով կը շարժէ, ոտքի կ'եղիկ, կը պտքի, կը նսի, մասներուն վրայ կը համրէ եւլին. եւլին. այս միջոցին տղեկ մը ներս կը մտնէ մեկ ձեռքը պոչը կտրած եռու մը պատկերը, միւսը պոչը):

ՍԱՓ. — Ի՞նչ կ'ուզես:
ՄԱՐԴ. — Եղբայր հանգիստ չթողուցին. մնաք բարով (Ոտքի կ'եղիկ բարկացած կը մեկնի):)

ՏՂԵԿ. — (Մանկական պարզամտութեամբ) Հիմա այս ազի չունեցող էշուն ազին տեղը պիտի դնեմ, աչքերս կապեցէք ու նայեցէք:

ՍԱՓՐ. (Գրպանեն դրամը բիանելով կուտայ անորեւ) Բաւական է, բաւական է, (Տղեկը դրամը առնելով տիկնոս երեւորը դրւես կ'եղիկ):

Ա. ՅԱՅ. — Փառք քեզ Աստուածական, վերջապէս կարգը ինձի եկաւ, եղբայր ժամ մըն է կսպասեմ, կ'աղաչեմ Պ, Սափրիչ, զիս ածիլէ:

ՍԱՓՐ. — Շատ աղէկ, բայց ածիլելու նոր մեթոտ մը ելած է որուն համաձայն ածիլուիլ ուզողները պէտք է կէս ժամ սպասեն:

Ա. ՅԱՅ. — Եղբայր, հոգ չէ, կ'սպասեմ, կը բաւէ որ շուտով ածիլուիմ և գործիս երթամ որովհետեւ մեծ հօրս հայրը հիւանդ է իր հօրմէն լաւ ծեծ մը կերած ըլլալու համար, ինձի կ'ըսպասեն մանաւանդ մեռնելու ալ հաւանականութիւն ըլլալուն համար, մեր մէջ պիտի բաժնենք իրմէ ժառանդ մնացած երկու զոյգ Նարօլէօնի ճիզմէ, հինգ զոյգ թէնէքէ կօշիկներ, 10 զոյգ տրեխս, 124 հատ ֆայտէ դգալ և 20 զոյգ Արամի օրէն մնացած եղներ: Իմ բաժինս ծախելով խեղճ Մարտիրոսին պիտի օգնեմ. որովհետեւ երկար ատեն անգործ մն ուէ վերջ, փողոցները գաւաթ և յախճապակիէ պնակներ ծախելով իր օրապոհիկը հազիւ կը հանէր, անցեալ օր փողոցին մէկ անկիւնը քիւ կը հանէր, անցեալ օր փողոցին մէկ առեւու քնացած ըլլալով՝ երազին մէջ կը տեսնէ որ իր թըշուառութեան պատճառը եղող գինով Յակոր, ծովին ճիշտ եղերքէն կ'անցնի, ա՛խ, կ'ըսէ, սանկ (զարնելու ձեւը ընել) ոտքի հարուած մը տուածիս պէս ծովը ձգէի սա անպիտանը՝ ըսելով երազին մէջ ոտքի

անանկ հարուած մը կուտայ որ իր գաւաթները և
պնակներ թաւալազլոր գետին տապալելով՝ ամէնքն
ալ ջարդ ու փուշուր կ'ընէ։ Զայնէն կ'արթննայ ու
եղելութիւնը տեսնելով կը վազէ ինծի կուգայ։ Հիմա
ես ստիպուած եմ անոր օգնել։

ՍԱՓԲ. (Հեգեական) եզներո՞վ։

Ա. ՑԱԾ. — (Քիչ մը վիրաւորուած)։ **Ա.Ր.** պ.
եզներով։

Մ'ՂԲ. — (Ժողովուրդին դառնալով՝ ցած ձայնով) հա՛, զիւզացի է եղեր, սրոր աղուոր խաղ մը ընեմ
կեցէք. (յետոյ անոր դարձած) շատ լաւ, քանի որ
անսն' է. աժիլուելու նոր մեթոսին համաձայն ոտ-
քերբ, մինչեւ վեր սօթեելէ վերջ սա ջուրին մէջ
(տաւ մը կը բերէ) պիտի դնես և սա օճառը բերանդ
առաջ պիտու սպասես (օնառը դժուարութեամբ բերա-
նը կը խօրէ, ձեռնովը կը հարուածէ օնառին, զայն
ներս մցնելու համար. յանախորդը աչֆերը կը լարէ)
զիտես ինչո՞ւ ջուրը ոտքերէդ մինչեւ մօրութիդ ար-
մատներո՞ն պիտի հասնի և օճառն ալ բերնէդ անոր
հանդիպելով երկութը միասին մօրութիդ արմատները
պիտի կակուզցնեն, որպէս զի դիւրութեամբ ածի-
ւուիս։ (Սափիչը ածելին փորին վրայ կը սրցնէ, այն
պահուն ներս կը մտնեն Տիգրան եւ Արամ (փոքրիկներ)՝
կը տեսնեն եղածը ու գաղտնի կը խնդան, երեսնին
ժողովուրդին կը դարձնեն՝ խնդանին ցոյց չտալու հա-
մար. տեսակ տեսակ շարժուածեւեր կ'ընեն ու միւս նա-
րելու ատինան կը խնդան. Արամ աչֆերը շրջելով
դէպի բնիերո՞ւ մատը բերնին կը դնէ ու հանդարտու-
րիւն կը յանձնարարէ լուելեայն. եւ ահա յանկարծ սա-
տանոն ներս կը մտնէ. Արամ եւ Տիգրան նիշեր արձա-
կելով կը փախչին. Սափիչը կը յարձակի սատանային
վրայ. իսկ Ա. Յանախորդը վախէն ա՛, ա՛, պուառով
կ'ոռնայ. Սափիչը կարծելով թէ Ա. Յանախորդը ածիլ
ուելու համար կ'ոռնայ)։

ՍԱՓԲ. — Ա.Ր. պիտի հիմա (ածելին կ'առնե. ու
յանախորդին երեսը լաւ մը օնառելին վերջ երբ կը
պատրաստուի ածելին սրցնել, ներս կը մտնի մոզր)։

ՄՈՒԴ. — (Քիչ մը արագ եւ յասակ ձայնով) ես
մոդ մըն եմ Պարսկաստանի երկրատան քաղաքէն
եկած. եթէ կ'ուզէք, ձեզի կարգ մը մոգական զուար-
ճարի փորձեր կ'ընեմ, յետոյ ձեզի կը սորվեցնեմ ու
վարձքս կ'առնեմ։

ՍԱՓԲ. — կ'ուզենք, կ'ուզենք, (ածելին կը բո-
ղու)։

ՄՈՒԴ. — Լաւ հիմա խաչած հաւկիթը սա շիշին
բերնէն ներս պիտի մացնեմ պարզ հրամանով մը։
(Խաչած անկեղեւ հաւկիթին տրամազիծէն քիչ մը ենդ
բերնով տիւի մը յատակը ալխօփ բարխուած ու բորնկ-
ցուած բամպակի կտոր մը նետելէ վերջ բանի մը երկ-
վայրկեան կ'սպասէ, յետոյ հաւկիթը տիւին բերնին վր-
այ կը դնէ սուր կողմէն. հաւկիթը կ'երկարի եւ տիւին
մէջ կը մտնի ձայնով մը. մտելին անմիջապէս առաջ
Մոզր «միշի՛ր» ըսելով կը հրամայէ գործին հմայքը
աւելցնելու համար. Այս փարձը յաջորդապէս կատարե-
լու համար բանի մը անգամ փորձել)։

ՆՊԵՆՎԷ սա շիշին մէջի (ներմակ տիւի մը մէջը
պարզ ջուր լեցնել) օլին զինիի պիտի փոխեմ. ահաւա-
սիկ տեսէք. (Մոզրի մը ձեւերը կ'առնե. յետոյ նախա-
պէս յատակը լուցկիի մը զլուիին կեսին չափ բեռ-
մանկանար Տր բօրափ նուրբ փուշի ցանուած գաւարի
մը մէջ կը լեցնէ երկուին ալ բարձր բոնելով. մինչեւ
բերանը լեցնելէ վերջ տիւր գրասեղանին վրայ կը դնէ
ու գրասեղանին վրայի միւս պարապ գաւարը առնե-
լով)։

ՀԻՄԱ այս զինին ալ օղիի պիտի փոխեմ, տեսէք.
(Երկու գաւարը վեր բանելով բեռմանկանարով կար-
միր ներկուած ջուրը կը լեցնէ երկրորդ գաւարին մէջ

որուն յատակը անկիւն մը դրուած պիտի ըլլայ երեք ոսպի չափ (իբօսիւլթիք որ սուս) եւ անոր վրայ կարեցուած պիտի ըլլայ տար կարիլ ասիս սիւլթիւռիք (կազ եաղը). կարմիր ներկուած ջուրը երկրորդ գաւարին մէջ իշած ժամանակն իսկ պիտի ներմիլ: Այս փորձն ալ նախապէս հանի մը անգամ փորձել, ուստիւրին եւ զուարենալի է:

ՍԱՓԲ. ԵՒ ՅԱՃ. — ԱՇ, ա՛:

ՍԱՓԲ. — Կ'ազաշնք, ի՞նչպէս կ'ըլլայ բացատրէ մեզի:

ՄՈԴ. — (Հպարտ երեւոյթով) Այս՝ պիտի բացատրութիւն: (Այս միջոցին մէկը ներս կը մտնէ զոյնզզոյն բղդիք երիզ փարբուած երկայն ցող մը մէկ ձեռքի, բուղը մը միւս ձեռքի. բուղը կը մատուցանէ սափրիչին ու կը հեռանայ անմիջապէս):

ՍԱՓԲ. — (Ծանր ծանր եւ յատակ կերպով կը կարդայ) «Այս թուղթը կը զրկուի Պազտատի խալիֆային կողմէ Ապուներու Փողոցը 8888888 նօմիրօ խանութին տէրը Սափրիչ Դրումիանոսին որ մարտ ամսոյ 36ին վերաքննիչ զատարանը փութայ՝ զատաւոր-խալիֆային առջեւ անցեալ օրուան էշերու խնդիրով դատուելու համար»:

(Թուղը գետին նետելով սրտնեղած). Սատանին երթայ, հասկցայ. (Ճողովուրդին դառնալով). Անցեալ օր շուկայէն բեռ մը փայտ գնած էի. փայտէն զատ գիւղացիին էշուն վրայ զտնուած ամբողջ փայտին համար սակարկած էի: Համետը փայտէ շինուած ըլլալով, ան ալ իրաւունքս է. գիւղացիին և իմ միջեւ զէճ ծագեցաւ, քանի որ աշխարհի վրայ չէ տեսնուած մէկը որ տէր զառնայ իր սակարկած փայտին հետ էշուն համետին ալ. ասոր վրայ Պազտատի խալիֆային գիմեցինք: Խալիֆան ինծի իրաւունք տուաւ որով ես համէտին տէր դարձայ բայց կ'երեւի էշուն տէրը

Կրկին դատարան դիմած է համետին համար և վերաքըննութիւն պահանջած է, քանի որ վերաքննիչ դատարանը կը կանչուիմ մարտ 36ին՝ երթամ տեսնեմ: (Կը մեկնի)

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ե Ր

ԱՐԱՐՈՒԻԱԾ Բ.

Բեմը դատարանը մը երեւոյը կ'առնե. խալիֆան արաբական երկայն վերարկու մը հազած, զլուխը մետախու էնթիէ մը եւ փարբոց՝ բազմած է արոռի մը վրայ. առջեւը գրասեղան մը՝ վրան գրեւր տարուած. Վարագոյրը վերնալէն վայրկեան մը վերջ ներս կը մտնէ սափրիչին կոչնազիրը բերող անձը եւ մեծ բուղը մը վրայ գրուած աղերսազիր մը կը մատուցանէ նախապէս խոնարհուրիւն ընելով. ես կը բաւուի. խալիֆան կը կարդայ եւ.

ԽԱԼԻՖԱ. — Ներս կանչէ՛ (Աղերսազիրը բերողը խոնարհուրիւն ընելով կը մեկնի եւ կը մտնէ զիւղացին ու խոնարհուրիւն ընելով կը կանցնի խալիֆային դիմաց): Դուն տուած ես այս աղերսազիրը:

ԳԻՒՂԱՑԻ. — (Խոնարհուրիւն ընելով) Այս՝, տէր դատաւոր:

ԽԱԼԻՖԱ. — (զաւազանը բանի մը անգամ գրասեղանին կը զարնէ ծառան կանչելու համար. ներս կը մտնէ ծառան) Սափրիչ Դամեանսս եկած է: ԾԱՌԱՅ. — Այս՝, տէր դատաւոր:

ԽԱԼԻՖԱ. — Ծուտով ներս կանչէ: (Ծառան կը մեկնի խոնարհուրիւն ընելով եւ կը մտնէ Սափրիչը ու կենայ զիւղացիին բովը, խալիֆան խօսք զիւղացիին ուղղելով) Հսէ նայիմ տղաս, ի՞նչ ունիս:

ԳԻՒՂԱՑԻ. — (Խոնարհուրիւն ընելով) Տէր դատաւոր, անցեալ օր այս սափրիչը ինծմէ բեռ մը փայտ

գնեց, փայտը իրեն յանձնեցի, բայց ան առարկեց թէ ինք էշուն վրայ գտնուած ԱՄԲՈՂ.Զ փայտին համար սակարկած ըլլալուն համար, համետն ալ իրեն պէտք էր յանձնուէր՝ իՄ ԿՍՐԾԻՔՈՎ, քանի որ համետն ալ փայտէ շինուած էր. երկար վիճարանութիւններէ վերջ դստարան դիմեցինք, Դատաւորը, ինչպէս Արարիոյ մէջ սրբազան պարտականութիւն մընէ, առած կաշառքին համար անոր իրաւունք տուաւ, որով ես համետս հօրսնցուցի; Ասոր փոխարէն ուրիշ բան չկրցի ընել, անցեալ օր իրեն ներկայանալով ըսի թէ մենք չորս հոգի ենք, մեղ կածիլե՞ս, այո՛ ըսաւ և պայխան դրինք որ անպատճառ պիտի ածիլէ, նախ ես ներս մտայ ու ածիլեց զիս, մինչդեռ մնաց ածիլեալ երեքը որ իմ էշերս են մերժեց ածիլել, Հետեւաբար տէր դատաւոր, քանի չորս հոգիի համար պայման դրած ենք, պէտք է իմ էշերս ալ ածիլէ իբր ՀՈԴԻ ունեցող էակներ, քանի որ ՓԱՅՑ ըսելով համետ կը հասկցուի, ուրեմն ՀՈԴԻ ունեցող ըսելով ալ էշ կը հասկցուի:

ԽԱԼԻՖԱ. — (Սափրիչին ուղեալ) Ի՞նչ կ'ըսես դուն այս տրամաբանութեան:

ԱԱ.ՓԲ. — Զեմ ընդունիր անոր պատճառաբանութիւնը, ան պէտք է ինծի էշ ըսեր և ո՛չ թէ չորս հոգի:

ԽԱԼԻՖԱ. — Ի՞նչ իրաւունք ունի քեզի էշ ըսելու:

ԱԱ.ՓԲ. — Այսինքն, «էշերը պիտի ածիլեն» ըսելու էր և ոչ թէ չորս հոգի:

ԽԱԼԻՖԱ. — Ի՞նչպէս որ դուն վարպետութեամբ մը էշուն վրայի ԱՄԲՈՂ.Զ փայտերուն համար սակարկելու, իրաւունք ունեցած ես էշուն համետն ալ առնելու, քանի որ համետն ալ փայտէ է, հետեւաբար վարպետութեանդ դէմ գործածուած արդար վարպետութեան և տրուած պայմանի համաձայն արդար է որ երեք էշերն ալ ածիլես. քանի որ անոնք ալ

հոգի ունեցող էակներ են ու իրենց վրայ ածիլուելիք մազեր ունին. այսօ՛ր !իսկ պարտաւոր ես ածիլելու զանոնք (Խիս կերպով կը հրամայէ):

ԱԱ.ՓԲ. — (Խոնարհութիւն ընելով եւ ընկնուած) Շնորհ ըրէք տէր դատաւոր, ծառայ եմ ձեր վաեմութեան, զոնէ միջոց տուէք վաղը ածիլեմ, անոնց մազերուն համար 20 օխա օճառ և երեք հատ սրցուած կացին պէտք է:

ԽԱԼԻՖԱ. — Շատ լաւ, վաղը անպատճառ ածիլէ, ահա ես կ'երթամ: (Յաջորդաբար կը մեկնին. գիւղացին ուրախ է խոկ Սափրիչը զլիսիկոր):

ՎԱՐԱԴՈՅՑ

ԱՐԱՐՈՒԻԱԾ Գ.

Սափրիչի խանութին տեսարանը. Սափրիչը նսած արոնի մը վրայ բիբան կը ծխէ. ներս կը մտնի Ա. յանախորդը

Ա. ՅԱԾ. — Ա՛խ շատ ծարաւցայ, ջուր մը խմեմ (Գրասեղանին վրայ դրուած օֆըր առնելով զլուխը կը վերցնէ եւ աշ սրունքը վեր առնելով արագ արագ դեպի վար կը ցնէկ):

ՍԱ.ՓԲ. — Ի՞նչ կ'ընես ծօ՛, ի՞նչ կ'ընես:

Ա. ՅԱԾ. — Ոտքս ցնցեմ որ ջուրը մինչեւ սոտքիս ծայրը իջնէ, որովհետեւ ամեն կողմս ծարաւցած է:

ԱԱ.ՓԲ. — Օօ՛, կը կարծե՞ս որ բերնէդ մինչեւ սոտքիդ ծայրը խողովակ դրուած է ուրկէ ջուրը մինչեւ վար պիտի իջնէ:

Ա. ՅԱԾ. — Հապա զիս ածիլելէ առաջ ոտքս ջուրը գնել տուիր, ըսելով որ վարէն վեր ջուրը դէպի օրուքս պիտի ելէր վարէն վեր կ'ելլէ ու վերէն.

վար չիջնէ՞ր։ Ես հիւանդանոցը Ալպանացի մը տեսայ որ աջ ոտքը ոօմաթիզմա ունէր և դեղ խմելուն պէս սրունքը կը թօթվէր որ դեղը մինչեւ ոտքը իջնէ։ Ասոր չե՞ս հաւատար։

ՍԱՓԻ. — (Հեզնական) կը հաւատամ, կը հաւատամ (Ժողովուրդին դառնալով, կամաց մը) գիւղացի։ Ուրեմն, քանի որ ամեն կողմդ ծարաւցած է և կը հաւատաս թէ մարմինիդ ո՛ և է մէկ մասը ջուր խմած ատենդ ցնցերով՝ ջուրը մինչեւ այդ մասը կը հասնի հետեւարար ականջներդ ալ սանկ (Ցուցամատը եւ միջնամատը վեր տնկելով իշու ականջներու պէս կը շարժէ) եթէ շարժես ջուրը հոն ալ կը հասնի . . . :

ՄՈՒԴԻ. — (Տեղեն յանկարծ ելլելով) Եղբայր, ձըգեցք ատոնք հիմա։ Ի՞նչ եղաւ նայինք ձեր դատավարութեան արդիւնքը։

ՍԱՓԻ. — Մի հարցնէք պարոն, վաղը երեք հատ էշ պիտի ածիլեմ Խալիֆային տուած վճիռին համաձայն։

ՄՈՒԴԻ. — Այդ ալ բան մը չէ. ամէնէն աւելի մեզ շահագրգոռդ բանը մեր փորձերն են, անոնց նայինք. էշ ածիլելը նոր բան մը չէ, ամէն օր ի՞նչ կածիլենք արդէն . . . Դանք մեր փորձերուն։ Տեսէք հիմա, սա մետաղէ զրամը սա խաւաքարտէ շրջանակին հետ միասին գաւազանի հարուածով մը այս կողմը (աջ կողմը) պիտի թոցնեմ, և յետոյ այդ դրամը այս շիշն մէջէն պիտի հանեմ։ Նայեցէք այս շիշը բոլորզին պարապ է ու մէջը դրամ ելն. չկայ (բան սանթիմեր տրամագծով խաւաքարդէ շրջանակ մը տնկել զինիի շիշի մը բերնին վրայ, յետոյ շրջանակին վերի եզերին վրայ մետաղէ դրամը անանկ մը զետեղել ու նիւս շիշի բերանին ուղուրեանը հանդիպի. ձեռքի փորդիկ գաւազանով շրջանակի մէջի կողմէն դէպի աջ՝ աջ եզերին ուժգին հարուած տալով շրջանակը բոցնել. շրջա-

նակը պիտի բոի, սակայն դրամը շիշին մէջ պիտի իջնայ. Եւ որպէս զի ձայնը չլսուի, հարկ է որ տշանակին հարուած տրուած ատենը պօռալով յայտարարել թէ դրամն ալ միասին պիտի երբայ, բանի մը անգամ կրկնել այդ յայտարարութիւնը մինչեւ որ դրամը ինկած ըլլայ, յետոյ յայտարարել թէ՝ ո՛չ, դրամը շիշին մէջէն պիտի հանուի. հանել դրամը ու ցոյց տալ, յետոյ դրասեղանին վրայ նետել՝ ձայն հանել տալու համար։

Ա. ՅԱՅ. (Ապօհար) Ա՛, ա՛։

ՄՈՒԴԻ. — Աւելի հետաքրքրաշարժ պիտի ընեմ, սա պնակներէին (գրասեղանին վրայ պատրաս) մէկը ես պիտի առնեմ մէկը դուն (կուտայ Ա. Յանախուրդին) միւսը դուն (Սափրիչին) հիմա իմրինս մէջը գտնուած գրիչին ծայրը քուկինիդ մէջ (Ա. Յանախուրդին) պիտի փոխադրեմ հեռուէն՝ առանց գրիչի ծայրին ձեռք դպցնելու. միայն, երկուքնիդ ալ նախ ձեռքովիդ պնակնուգ մէջ ջուրը կը խառնէք, յետոյ պնակին տակը լաւ մը շիշէ վերջ երեսնուգ կը քսէք։ Քանի մը անգամ կրկնեցէք։

(Ա. Յանախուրդի միայն մէկ երեսին պիտի է խէ. մէկ երեսը օնառուած եւ ածիլուելիք ըլլալով. իսկ սափրիչը երկու երեսին։ Սափրիչին եւ Ա. Յանախուրդին պնակներուն ետեւը վառած մարխի կամ յամբարի պատրոյգին բռնուած ըլլալով սեփանեւ եղած են նախապէս. որպէս զի փորձի ժամանակ մոզը սեւցած պնակ չառնէ. իրենինին մէջը սեւ նուան մը կ'ընէ։ Այս կերպով սափրիչ եւ Ա. Յանախուրդ լաւ մը սեւի կը ներկեն իրենց դէմքը եւ երկուէն ալ բրէջալիր կը խընդան, իւրաքանչիւրը կարծելով թէ ինք ազատ է այդ խաղիուրենէն եւ թէ միայն դիմացինն է ապոււը որ սեւցուած է, բանի մը վայրկեան այսպէս բեմին վրայ խնդալով իւրարու վրայ։

Վ. Ա. Ր Ա. Գ Ո Յ Բ Ր

ԾԱՆՈԹ. Նշանակուած փորձերուն տեղ կարելի է
ուրիշ աւելի հետաքրքրացարժները ընել, բայց պնակ-
ներու փորձը չփոխել երեք:

ԱՆՁԵՐ

Սափրիչ
Ա. Յանախորդ
Բ. Յանախորդ
Մարզար
Տղեկ մը
Սատանայ
Մոգ
Դատաւոր-խալիթա
Գիւղացի
Դատարանի ծառայ



ԾԱՆՈԹ. — Ա. Յանախորդիկն լրայ ի զործ դրուած
ածիլուելու այլանդակ մերութ իրավակն ի զործ դրուած
է Անասոյուի մէջ բառորդ դարեկն աւելի առաջ:

32

988 · 204.

2013



